# Դանիել Վարուժան

## Խաչբուռ

(Աստվածամոր սեղանին)

Քեզ կը բերեմ, Մա՛յր, հունձքերուս նախընծան:
Զոհագործե՛ սեղանիդ վրա՝ ուր, դարե՛ր,
Փեթակներուս մեղրամոմերը դեղձան
Լույս ու արցունք են հոսեր:

Դո՛ւն, սուրբ պաշտպան հայրենական հողերուս՝
Որոնց տըվիր անմահությունը դրախտի.
Ծիլը ծաղիկ ըրիր, հույսը՝ Արշալույս,
Որ խըրճիթիս կը ժըպտի:

Դո՛ւն, Խաչաբուռն այս, զոր իմ ձեռքով եմ հյուսեր,
Ընդունե՛, Մա՛յր: Բյուր հասկերուս մեջ ասոնք
Կը նազեին կույսերու պես շիկահեր,
Արևահե՛ղց և ատո՛ք:

Գերանդիս տակ, գըլուխնին դեռ ցողով,
Լուսնեն հնձված ճառագայթի պես՝ ինկա՛ն:
Ոչ մի արտույտ քանդեր է իր կըտուցով՝
Անոնց շարքերը լըման:

Ես հյուսեցի զանոնք, գիսակ առ գիսակ,

Տալով խաչին ձևը Որդվույդ կարեվեր՝
Որուն արյունն, ամեն Զատկի, սո՛ւրբ կըրակ,
Մեր ակոսներն են խըմեր:

Իր հույսերուս, իղձերուս հետ հյուսեցի:
Անոնց մեջ է հույզն արտին, հուրն արևուն,
Խոփին փայլակն ու թևիս թափն առնացի,
Պաղատանքն իմ թոռներուն:

Մա՛յր, Խաչաբուռն այս օրհնե՛. և տուր արտերուս
Ամառն՝ ոսկի, ինչպես գարունը՝ մարգրիտ.
Որքան ամբարքըս լի ըլլան՝ ջահեր լույս
Պիտի տան խորանիդ:

Ըրե այնպես՝ որ – նման հի՛ն օրերուն–
Երբ դաշտերե դաշտ ժուռ գալու դուն ելլես՝
Փուշեր չըգա՛ն ոտքերուդ տակ՝ այլ սարսռուն
Կակաչներ՝ մեր սըրտին պես: